

- 39 Ահա հըսկմամբ այսու տըքնեալ,
 Զ՞հօտ կեսարեան ինքեան յանձնեալ,
 Զ՞ցայգ եւ ցերեկ անխոնջ հովուեալ,
 Հովուաց քաջաց նա նըմանէր :
- 40 Սերմըն ի ուհ ոչ սերմանեալ,
 Ժայռից փըշոց չաւտացեալ,
 Միայն յերկիր բարի ցանեալ,
 Զաստուծոյ բանն արդիւնատրէր :
- 41 Ի դարաստան Տեառն մըշակեալ,
 Յոստոց անտի զանպէտս հատեալ,
 Շուրջ զանպրտղօք բահիւ բըրեալ,
 Զ՞ծառ, տունկ եւ թուփ պըտղաւէտէր :
- 42 Քաջ այգեպան հանդիսացեալ,
 Զեղծիչ փոքրիկ աղուէս կալեալ,
 Զայգի փրկչին ծաղկազարդեալ,
 Ժիր մըշակաց համանմանէր :
- 43 Զուղորդն յաստիս աւազակեալ,
 Զվերս ի վերս վերաց առեալ,
 Ի պանդոկի Տեառն դարմանեալ,
 Զ՞Սամարացին կերպարանէր :
- 44 Իբր վատ ծառայ ոչ թաքուցեալ
 Ի ներքս հողոյ զտաղանդն առեալ,
 Այլ զայն երկամբք ճոխացուցեալ,
 Քանքարաշահ ծառայ լինէր :
- 45 Ընդ էր դիտել ըզկեսարեանց
 Փառս եւ պարծանս ընդ պարծանաց
 Վասն ունեւոյ հովիւ ինքեանց
 Սարգիս զընտրեալն ի մէջ հովուաց :